Բիբիդոնի ժողովը

Ըստ Աթաբեկ Խնկոյանի ,,Մկների ժողովը,, ստեղծագործության

Չոր էր, չոր էր Բիբիդոն: Էս խեղճ պղպեղ Բդրիկոնը ելավ ընկավ դոնեդուռ, էլ չթողեց տուն-կտուր: Սոխ ու պղպեղ, բադրիջան, կաղամբ, լոլիկ ու բիբար հավաքվեցին ժողովի, թե ոնց անեն, ոնց անեն, որ ջրերը ետ բերեն:
Առաջ եկավ մի ծեր պապ՝ բադրիջան Բդրոն:
_Լսե՛ք, բանջեր ցեղակից, չունեմ որդի կողակից, ես գրագետ ծերուկ եմ և մի խելոք բան գիտեմ: Ա՛յ, բերել եմ մի մկնիկ ու մի խելոք…
_Էլ ինչ, էլ ի՞նչ,- վրա տվեց հարբած բիբար Հարբիդոն:
_Ինչ ու ինչ, համակարգիչ: Հենց որ մտնեք ինտերնետ, գնաք գտնեք էն գիշատիչ…
_Գիշատի՞չ… Ի՞նչ գիշատիչ,-հիմար Զմբոն մեջ ընկավ:
_ Չար գիշատիչ Զուրկտրիչ: Ջնջենք նրան ինտերնետից, ջուրը բացենք Windows-ով և ուղարկենք Բիբիդոն: Բայց ո՞վ մտնի ինտերնետ:
_Ճուվ-ճուվ, դու:
_Ես սիրուն եմ:
_Զմբո, դու:
_Ես սմբուկ եմ, դմլուկ եմ, բա որ այնտեղ մոլորվե՞մ:
_Հարբիդո:
_Ես հարբած եմ:
_Սոխլուկ, դու:
_Որ փռշտամ, լաց կլինես:
_Բիբրիկոն:
_Ասենք գնանք, բա որ այնտեղ էլ մենք մնա՞նք: Թող իմաստուն պապը գնա:
_Լռե՛ք բանջարներ, ճաշ դառնաք դուք: Ճառ ասեմ, թե՞ ջուր բացեմ:
Բարկացավ Բդրոն, մուկը շպրտեց, համակարգիչն էլ նա մի կողմ դրեց:
_Էլ ինչ ինտերնետ ու ինչ Windows, մութ մնացեք, մութ չորացեք:
Ու՝ պըրծ:

Էլեն Բաբայան
Գեղարվեստի դպրոց-պարտեզ
3-րդ դասարան